զգեց. կրաւնաւորի»։ Մարտիրոս վարդապետը կոչուած է «բանի սպասաւոր»(*)։ Գրչի «բազմերախտ» եւ «սիրեցեալ» քեռին է Յովհաննէս քահանայ, իւր երկրորդ ծնողը, իսկ սորա ընկերն է Յովհաննէս գրիչ, որ օգնել է «ի յայս գործառնութի.». Եփրեմը, թէև պատանեակ էր և իրեն համբակ է անուանում, բայց Գլաձորի ընտիր գրիչներից մէկն էր (պատկ. 223)։ Ձե-

Պատկեր 213.

ռագիրը գրուած է «ի վանս Գլաձոր ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի եւ սբ. բարուենապետիս Եսայեայ» (Ցիշատակարանները տես Ցաւել. Բ. 82)(**)։

Այս նոյն Յովհաննէս գրչին է և Երուսաղէմի № 540 ձեռագիրը, Նոր Կտակարանն ամբողջապէս, հնից էլ Առակք Սողոմոնի և Եսայի, գրուած Տոսպեցի կաթողիկոս վարդապետի համար, որ երեք տարի աշակերտել էր Յոհան Արճիշեցուն և ապա քահանայ ձեռնադրուելուց յետոյ՝ Գլաձոր եկել և ութ տարի աշակերտելով Նչեցուն, վարդապետական դասաղան ստացել երեսուն տարեկան հասակում։ Այստեղից նա գընում է Երուսաղէմ և այս ձեռագիրն էլ Փրկչի վանքին նուիրում. օրինակը տուել է վերոյիշեալ Յովհաննէս քահանան, «ծաղկեալն հոգւով եւ հերով»։ Ձեռագիրը թուական չունի, բայց գրուած է 1318 թուից քիչ յետոյ, երբ օրինակի շնորհող Յովհաննէս քահանան ուխտ էր գնացել Երուսաղէմ, որի գալստեանն սպասում է Յովհաննէս գրիչը։ Կարապետ վարդապետը վախճանուել է 1356–1363 թ. թ. մէջ(*)։

Նոյն 1318 թուին գրուել է այստեղ մի Կանոնագիրք Յակոբ Թագորցու ձեռքով, «հրամանաւ մեծ բարուենապետիս», այսինքն Եսայի Նչեցու. ստացողն է Տիրացու քահանայ, Նչեցու «երկամբք ծնեալ որդեակ»ներից մէկը, գուցէ նոյն՝ Տիրացու գրչի հետ։ Եսային կոչուած է «ներհուն հոգեւոր հանուրց հայկազանց և լուսատու ջահ մանկանց եկեղեցւոյ»(**)։ Յակոբ Թագորցու գրչութեան մասին գաղափար կարելի է կազմել նորա ընդօրինակած Նիւսացու մարգարէութեան ձեռագրից, որից մի կտոր նմանահանութեամբ տալիս է Ալիշանը(***)։ Թագորցին ոչ միայն գրիչ էր, այլ և վարդապետ հեղինակ. «Յակոբա վարդապետի Թագորցոյ արարեալ ի բանն, որ ասէ, Ծնեալ.ն ի մարմնոյ մարմին է և ծնեալն ի հոգոյ հոգի» (Յովհ. Գ. 6). Սկս. «Գրէ ուրեմն ՇԱՀԱՄՆ Դաւիթ

Պատկեր 214.

յաղաւթական ի բանն իւր»։ Նա է գրել նաև Ստեփանոս–Տարսայիճ Օրբէլեանի աւետարանի ընծայականը Սարգիս վարդապետին. իսկ գրիչն ու նկարիչն էր Պо-

(*) Ցիշւում է 1346 թուին մի Մարտիրոս քահանայ Սանահնեցի, որ ստացել է Թորոս Տարօնեցու գրած էջմ. № 2239/2187. ձեռագիրը, երկու Մարտիրոսների նոյնութեան ապացոյց չունինք։

(**) էջմ. № 1429/1419։ Այս Ձեռագիրը Երուսաղէմ է ընկել. այնտեղից յետոյ բերել է Մկրտիչ վարդապետ Նահապետենց, որով դասախօսել է Թովմա Մեծոփեցին 1427 թուին. «դասիւ զգիրս ի դուրս ելի»։

(*) Երուսաղէմի Ձեռագրի նկարագրութիւնն ու յիշատակարանները տես Ֆ. Մուրատ, Ցայտ. Յովհ. հին թարգմանութեան յերուսաղէմ, 1905—1911, եր. ՃԺԹ և շար.։

(**) Փիրղալէմեան, Նշխարք, անտիպ, (Ցաւել. Բ. 22)։

(***) Սիսական, 135, պատկ. 39։